ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 1917—1918 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հոկտեմբերի 25-ին բացված սովետների համառուսաստանյան համագումարը նույն օրն ընդունեց իր առաջին պատմական փաստաթուղթը՝ դիմում բանվորներին, զինվորներին և գյուղացիներին, որով ամբողջ աշխարհին հայտնեց Ռուսաստանում բուրժուազիայի իշխանությունը տապալելու և երկրի կառավարումն իր ձեռքը վերցնելու մասին։ Նորաստեղծ սովետական իշխանության արտաքին ու ներքին քաղաքականության գլխավոր սկզբունքներն էին՝ անհապաղ դեմոկրատական հաշտություն, հողի հանձնումը գյուղացիներին, բանակի դեմոկրատացում, բանվորական վերահսկողություն արտադրության վրա և Ռուսաստանում բնակվող բոլոր ազգերի ինքնորոշման իսկական իրավունքի ապահովում։ Դիմումի տեքստը գրեց Լենինը, այն համագումարում կարդաց Լունաչարսկին։

Իշխանությունը գրավելու երկրորդ օրը՝ հոկտեմբերի 26-ի գիշերը, համագումարը ընդունեց Լենինի գրած դեկրետը հաշտության մասին, որի մեջ քաղաքական ուրիշ հարցերի հետ միասին ձևակերպված են նաև ազգերի նկատմամբ կիրառվելիք հեղափոխական քաղաքականության հիմնական սկզբունքները։ Դեկրետը կարգ սահմանեց, որի համաձայն հաշտության պայմանները վերջնական են, եթե դրանք հաստատվում են բոլոր ազգերի լիազոր ժողովների կողմից։ Դեկրետը դատապարտեց փոքր կամ թույլ ժողովուրդների բռնի միացումը, մեծ պետության կազմում փոքր ազգերին բռնությամբ պահելը։ Փոքր ազգի կողմից տիրապետող ազգի ճնշման դեմ բարձրացրած խռովությունների ու ապստամբությունների ճնշումն ուժեղ ազգի զորքի կողմից՝ դեկրետը բնութագրեց որպես բռնության գործադրում, զավթում, անեքսիա[1]։ Նույն դեկրետում նշվում է նաև, որ երկրի ամեն մի ազգի պետական գոյության ձևի հարցը որոշում է տվյալ ազգն իր կամքով։

Այսպիսով, սովետների համագումարը տվեց ազգային հարցի հեղափոխական լուծման գլխավոր գիծը, որը հռչակեց ազգային սահմանափակումների, խտրականության և ճնշումների վերջը, հաստատեց ազգերի իրավահավասարության, նրանց ինքնորոշման և ազգային պետության ստեղծման ծրագիրը։

Սովետների համագումարը երկրում հռչակեց սովետական իշխանություն և ընտրեց սովետական կառավարություն՝ ժողովրդական կոմիսարների սովետ՝ Վ. Ի. Լենինի նախագահությամբ։ Ժողովրդական կոմիսարների սովետի կազ-

---

1 *Տե՛ս* «Известия», 27 октября, 1917 (*Լենին, Երկեր, հատ. 26, էջ 256—297*)։

մում ստեղծվեց ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատ, որի վրա պարտականություն դրվեց նախապատրաստել և կառավարությանը ներկայացնել ազգային հարցի վերաբերյալ բոլոր կարևորագույն ձեռնարկումները։

Սովետների երկրորդ համագումարը հոկտեմբերի 26-ի լույս 27-ի գիշերը քննեց ազգամիջյան ընդհարումների հարցը և դատապարտեց անցյալում տեղի ունեցած այդ արյունոտ դատաստանները, որոնք կազմակերպվում էին ցարական իշխանությունների թելադրանքով և իրագործվում էին սևհարյուրյակային, ժանդարմական կորպուսների ուժերով։ Այդ հարցի մասին համագումարի բանաձևում ասված է. «Բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների սովետների համառուսական համագումարը հանձնարարում է սովետներին՝ տեղերում անմիջապես ամենաեռանդուն միջոցառումներ ձեռնարկել արգելակելու հակահեղափոխական ելույթները և հրեաների ու մյուս բոլոր ազգությունների ջարդերը...»[2]։

Ազգային հարցում սովետական կառավարության առաջին հեղափոխական ակտերից մեկը հանդիսացավ Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան, որի նախագիծը կազմվեց հոկտեմբերի 28-ին և կառավարությանը ներկայացվեց սովետական իշխանության հաստատման երրորդ օրը։ Դեկլարացիան մանրակրկիտ քննվեց և ԺողկոմՍովետի կողմից ընդունվեց 1917 թ. նոյեմբերի 2-ին։ Դեկլարացիան սահմանեց, որ ազգային թշնամանքի և փոխադարձ անվստահության քաղաքականությանը վերջ է տրվում, դրա փոխարեն հաստատվում է Ռուսաստանի ժողովուրդների փոխադարձ լիակատար վստահության քաղաքականություն, ազգերի կամավոր և ազնիվ միության քաղաքականություն։ Ժողովրդական կոմիսարների սովետը հայտարարեց, որ ազգային հարաբերությունների ասպարեզում նա իր գործունեության հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

1. Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարություն և սուվերենություն։

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշում, ընդհուպ մինչև անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքը։

3. Ազգային և ազգային-կրոնական ամեն տեսակի արտոնությունների և սահմանափակումների վերացում։

4. Ռուսաստանի տերիտորիայում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունների և էթնիկական խմբերի ազատ զարգացում[3]։

Դեկլարացիան հավանության արժանացավ կուսակցության վերադաս օրգանների կողմից, Կենտգործկոմում և տեղական բոլոր սովետներում։ Ռուսաստանի բազմազգ ժողովուրդները ողջունեցին այդ մեծ ակտը, տոգորվեցին նրա վեհ գաղափարներով։

Այսպիսով, ազգային հարցի այն սկզբունքները, որոնք Լենինը մշակել և տեսականորեն հիմնավորել էր հեղափոխությունից առաջ, ԺողկոմՍովետի դեկլարացիայի մեջ իրավական ուժ ստացան և դարձան պետական քաղաքականության ելակետային սկզբունքները, որոնք հետագայում ավելի զարգացան և ծավալվեցին հեղափոխական իշխանության նոր ակտերի մեջ։

---

2 «Рабочая газета», 28 октября, 1917.

3 Տե՛ս «Правда», 3 ноября, 1917.

Այդպիսի հիմնական ակտերից մեկն էլ հանդիսացավ «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան», որը դրեց Լենինը 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին։ 1918 թ. հունվարի 3-ին դեկլարացիան քննվեց և ընդունվեց Կենտգործկոմի նիստում և ապա հրապարակվեց մամուլում[4]։ Հունվարի 5-ին սահմանադիր ժողովի առաջին նիստում Յա. Մ. Սվերդլովը կարդաց այդ դեկլարացիան, առաջարկելով ընդունել այն որպես սահմանադիր ժողովի որոշում և սահմանադրության հիմք։ Սակայն քանի որ սահմանադիր ժողովի մեծամասնությունը կազմված էր մենշևիկներից, էսեռներից, կադետներից և այլ հակահեղափոխական տարրերից, Լենինի կազմած և Կենտգործկոմի հավանությանն արժանացած դեկլարացիան մերժվեց։ Բուրժուական և մանր բուրժուական այդ կուսակցությունները չհամաձայնվեցին սովետական իշխանության քաղաքականության հիմնական սկզբունքների հետ, մերժեցին ազգերի անկախության և նրանց պետականության կազմավորման լենինյան հարցադրումը, փաստորեն կանգնեցին ազգային ճնշումների հին քաղաքականությունը շարունակելու տեսակետի վրա։ Սահմանադիր ժողովը ցրվեց։

Ժողովուրդների իրավունքների դեկլարացիան ներկայացվեց սովետների համառուսաստանյան III համագումարին, որը երկրի բազմազգ ժողովուրդների ամենալայն զանգվածների կողմից ընտրված մոտ հազար մարդուց կազմված մի իսկական ներկայացուցչական օրգան էր։ Այդ համագումարը միահամուռ կերպով հավանություն տվեց «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիային», այն հայտարարվեց հիմնական օրենք[5]։

Դեկլարացիայի I հոդվածում ասված էր. «Ռուսաստանի սովետական հանրապետությունը հիմնվում է ազատ ազգերի ազատ միության հիմունքով, իբրև սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա»[6]։ Այնուհետև, համագումարի որոշումն ասում էր, որ Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավոր դասակարգերի իսկապես ազատ ու կամավոր միություն ստեղծելու նպատակով սահմանվում են ֆեդերատիվ հանրապետության միայն հիմնական սկզբունքները, իսկ յուրաքանչյուր ազգի բանվորների ու գյուղացիների կամքին է թողնվում իրենց համագումարներում ինքնուրույնաբար որոշելու իրենց ազգային պետականության, անկախության կամ ֆեդերատիվ հանրապետության մեջ միանալու հարցերը։

Սովետների համառուսաստանյան III համագումարը հաստատեց Ժողովրդական կոմիսարների սովետի հռչակած բոլոր ակտերը, որոնց մեջ ձևակերպված էին առանձին երկրամասերի ու ազգերի լիակատար անկախության և նրանց ազգային պետական կազմավորման հարցերը։ Համագումարը նաև առանձին որոշում ընդունեց ազգային հարցի մասին։ Այդ որոշման մեջ ասված է. «Համագումարը ամբողջովին ընդունում է և ողջունում Ժողովրդական կոմիսարների սովետի քաղաքականությունն ազգային հարցում, որն ուղղված է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը կյանքում իրականացնելու խնդրին... Համագումարը մասնավորապես հաստատում է Ժողովրդական կոմի-

---

4 Տե՛ս «Правда», 4 января, 1918.

5 Տե՛ս «Съезды Советов РСФСР», Москва, 1939, էջ 41—42։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 517։

սարների սովետի և Կենտգործկոմի դեկրետները Ֆինլանդիայի և Հայաստանի մասին։ Համագումարը իր խոր համոզմունքն է հայտնում այն բանում, որ սովետական իշխանության հետագա քայլերը այդ ուղղությամբ կնպաստեն ազգերին բռնի կերպով իր կազմում պահող հին ռուսական կայսրությունը դարձնելու սովետական հանրապետությունների եղբայրական, կամավոր հիմունքներով միավորված, ֆեդերատիվ միություն»[7]։

Ազգային հարցի մասին սովետների համառուսաստանյան III համագումարի ընդունած որոշումները հիմք հանդիսացան Ռուսաստանի Սովետական Հանրապետության հիմնական օրենքի՝ առաջին սահմանադրության համար, որն ընդունվեց սովետների համառուսաստանյան V համագումարում, 1918 թ. հուլիսի 10-ին։ Այդ սահմանադրության նախագծերը, համագումարից առաջ տեղի ունեցած քննարկումները և հարուստ նյութերը ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ հոգատարությամբ էր Լենինը հետևում ազգային հարցի հիմնական սկզբունքների մշակմանն ու հաստատմանը[8]։ Սահմանադրության առաջին բաժնի առաջին գլխում ասված է, որ «Ռուսաստանի սովետական հանրապետությունը հաստատվում է ազատ ազգությունների ազատ միության հիմունքով, իբրև սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա»[9]։ Սահմանադրության մեջ այնուհետև ընդգծվում էր, որ Ռուսաստանի տարբեր ազգերի ամուր դաշինքի համար սահմանադրության մեջ ձևակերպված են միայն ազգային քաղաքականության հիմնական հարցերը, յուրաքանչյուր ազգի աշխատավորներին իրավունք վերապահելով որոշելու ֆեդերացիային մասնակցելու հիմունքները, կազմելու ավտոնոմ հանրապետություններ կամ մարզեր։ Ռուսաստանի Սովետական Հանրապետության մեջ ազգային հարցում կիրառվող այդ քաղաքականությունը հետագայում օրինակ ծառայեց նաև այն անկախ կամ ինքնուրույն սովետական հանրապետությունների համար, որոնք չէին մտնում ՌՍՖՍՀ-ի մեջ և նրա հետ կապված էին իրավահավասարության դաշինքով։

Հեղափոխության գլխավոր ակտերն ազգային հարցում 1917 թ. վերջին և 1918 թ. վերջ դրեցին այն ճնշումներին, բռնություններին և խտրականությանը, որոնք գործադրվում էին երկրի բնակչության 57 տոկոսը կազմող ոչ ռուս ազգությունների ժողովուրդների նկատմամբ։ Այդ ժողովուրդները Հոկտեմբերյան հեղափոխությունից ստացան լիակատար ազատություն, դարձան իրավահավասար, կանգնեցին պետական-քաղաքական և տնտեսական-կուլտուրական զարգացման նոր, սովետական ուղու վրա։

Լենինյան ազգային քաղաքականությունը երկրում կոնկրետ միջոցառումներով իրականացնելու գործում մեծ դեր կատարեց ազգությունների ժողովրդական կոմիսարիատը, որը ստեղծվեց հոկտեմբերի 26-ին ձևավորված սովետական կառավարության կազմում։ Կոմիսարիատը լայն գործունեություն ծավալեց սովետական իշխանության ազգային քաղաքականության կոնկրետ հարցերը մշակելու և իրագործելու համար, հանդիսանալով ազգային քաղաքականության կիրառման պետական-կազմակերպական կարևոր լծակը։ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատը հանդիսանում էր ժո-

---

7 «Газета Временного рабоче-крестьянского правительства», 18 января, 1918.
8 Տե՛ս ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 25 և հտ.։
9 «Известия» ВЦИК, 19 июля, 1918.

ղովրդական կոմիսարների սովետի անբաժան մասը, նրա օրգանը։ Այդ կոմիսարիատի գործունեությունը չի կարելի պատկերացնել Լենինի գլխավորած ժողկոմսովետի գործունեությունից մեկուսացված։

Ազգությունների գործերի ժողկոմատը ստեղծվեց 1917 թ. հոկտեմբերին և գոյություն ունեցավ մինչև 1923 թ. սկզբները։ Այն վերացվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծվելու կապակցությամբ։ Կոմիսարիատը կազմված էր ժողովրդական կոմիսարից, կոլեգիայից և ազգությունների գործերի կոմիսարիատներից կամ բաժիններից։ Ի տարբերություն մյուս կոմիսարիատների, որոնց կոլեգիաների անդամները նշանակվում էին անհատապես, ազգությունների գործերի ժողկոմատի կոլեգիան կազմվում էր ազգությունների գործերի կոմիսարներից և բաժինների վարիչներից՝ ներկայացուցչական կարգով։ Բոլոր ազգերի գործերի կոմիսարները և բաժինների վարիչները ի պաշտոնե մտնում էին ժողովրդական կոմիսարիատի կոլեգիայի մեջ, որտեղ նախապատրաստվում էին և ժողկոմսովետի հաստատմանը ներկայացվում այս կամ այն ժողովրդին վերաբերող կարևորագույն ակտերը, դեկրետները, որոշումները։ Սահմանվել էր կարգ, որի համաձայն ժողկոմսովետի նիստերում որևէ երկրամասի կամ ազգի մասին դեկրետները և որոշումներն ընդունվում էին տվյալ ազգային գործերի կոմիսարի պարտադիր մասնակցությամբ։

1917 թ. վերջերին և 1918 թ. առաջին կեսի ընթացքում ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվեցին առանձին ազգությունների գործերի կոմիսարիատներ կամ բաժիններ, ընտրվեցին նրանց աշխատողները և ծավալվեց գործունեությունը։ Կազմակերպվեց հայկական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Սուրեն Մարտիրոսյան (Վ. Ավանեսով), լիտվական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Միցկեվիչ-Կապսուկաս, լատվիական ազգային կոմիսարիատ՝ կոմիսար Ֆրիդրիխ Ռոզին (Ազիս), լեհական ազգային կոմիսարիատ՝ կոմիսար Յուլիան Լեշչինսկի, հրեական ազգերի գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Սեմիոն Դիմանշտեյն, Ռուսաստանի մուսուլմանների ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Մուլլա Նուր Վախիտով, բելոռուսական ազգային գործերի կոմիսարիատ՝ կոմիսար Դմիտրի Ժիլունովիչ։ Նույն ժամանակամիջոցում կազմակերպվեցին նաև բաժիններ՝ առանձին ազգությունների գործերով զբաղվելու համար (ուկրաինական բաժին՝ վարիչ Եֆիմ Պետրենկո[10], էստոնական բաժին՝ վարիչ Հանս Պեգերման, կիրգիզական բաժին՝ վարիչ Մահմեդ Տուրգարին, չեխոսլովակյան բաժին՝ վարիչ Արնո Գաիս, կալմիկական բաժին՝ վարիչ Զուդբաև, Կովկասի լեռնականների բաժին՝ վարիչ Օմար Բեգ-Ալիև, չուվաշական բաժին՝ վարիչ Դանիել Էլմին, մարիական բաժին՝ վարիչ Ն. Ալեքսև, Մերձավոր Արևելքի մուսուլմանների բաժին՝ վարիչ Նարիման Նարիմանով, վոտիական բաժին՝ վարիչ Մ. Պրոկոպիև, հարավային սլավոնների բաժին՝ վարիչ Վ. Մարգովիչ)։ Հետագայում կոմիսարիատները կամ բաժինները ենթարկվում էին փոփոխությունների, ըստ անհրաժեշտության ստեղծվում էին նորերը կամ վերացվում եղածները։

---

10 Ուկրաինական ազգային գործերի գծով կոմիսարիատ չկազմակերպվեց, որովհետև 1917 թ. դեկտեմբերի 25-ից արդեն ձևավորվել էր ուկրաինական ինքնուրույն սովետական հանրապետությունը։ Ազգությունների գործերի ժողկոմատում ուկրաինական բաժինն ստեղծվել էր մասնակի հարցերը լուծելու համար։

Ազգային գործերի կոմիսարիատներն ունեին իրենց կոլեգիաները և ենթաբաժինները։ Կոմիսարիատներից շատերը հիմնեցին իրենց պարբերական օրգանները և հրատարակչությունը։

Ազգությունների գործերի կոմիսարիատը հատուկ կանոնադրություն մշակեց նահանգական և մարզային սովետներին կից ազգային գործերի գծով բաժիններ և սեկցիաներ ստեղծելու մասին։ Կանոնադրության մեջ ասված է. «ՌՍՖՍՀ այն վայրերում, որոնք ունեն բնակչության բազմազան ազգային կազմ, դեպուտատների սովետներին կից կազմակերպվում են ազգությունների գործերի բաժիններ»[11]։ Այդ բաժինները, հաշվի առնելով տվյալ նահանգում, մարզում կամ գավառում ապրող ազգությունները, դրանց համար ստեղծում են ազգային սեկցիաներ։ Կանոնադրության V հոդվածը սահմանել է բաժինների գործունեության հետևյալ խնդիրները. «ա) Սովետական իշխանության սկզբունքները կիրառել համապատասխան ազգության մեջ նրա մայրենի լեզվով. բ) կյանքում իրագործել ազգությունների գործերի ժողկոմատի բոլոր որոշումները. գ) բոլոր միջոցները ձեռք առնել բարձրացնելու տվյալ տերիտորիայում բնակվող ազգերի աշխատավորական մասսաների կուլտուրական մակարդակը և դասակարգային գիտակցությունը. դ) պայքար մղել հակահեղափոխության և նրա ազգային դրսևորումների դեմ»[12]։

Վ. Ի. Լենինը մեծ կարևորություն էր տալիս ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի դերին, մշտապես պահանջում էր ուժեղացնել նրա գործունեությունը։ Այդ ժողկոմատի աշխատանքի մասին Լենինի դիրեկտիվ փաստաթղթերից բերենք մեկը՝ Ժողկոմսովետի 1920 թ. հոկտեմբերի 30-ի որոշումը՝ «Ազգությունների գործերի ժողկոմատի գործունեությունն ուժեղացնելու մասին»։ Որոշման մեջ ասված է. Ազգությունների գործերի ժողկոմատի գործունեությունն ուժեղացնելու համար ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է.

1. Ազգությունների գործերի ժողկոմատի կոլեգիան ուժեղացնել մշտական աշխատող անդամներով.

2. Պարտավորեցնել բոլոր ժողկոմատներին՝ հանրապետության և մարզերի ծայրամասերին ու առանձին ազգություններին վերաբերող բոլոր միջոցառումների ժամանակ հարցնել ազգությունների գործերի ժողկոմատի կարծիքը.

3. Ազգությունների գործերի ժողկոմատին տալ այնպիսի աշխատողներ, որոնք ծանոթ լինեն մեր ազգային քաղաքականությանը.

4. Հանձնարարել Մոսկվա քաղաքի բնակբաժնին՝ ամենահրատապ կարգով ազգությունների գործերի ժողկոմատին շենքեր տրամադրել բոլոր ներկայացուցչությունների համար.

5. Խնդրել Կենտգործկոմին հրահանգել նահանգական գործկոմներին՝ ա) ազգությունների գործերի ժողկոմատի տեղական բաժինները դիտել նահանգական գործկոմի մյուս բաժիններին հավասար... բ) ուժեղացնել նահանգական ազգային բաժինները, նրանց ղեկավարումը չհանձնարարել երկրորդական աշխատողների.

---

[11] «Жизнь национальностей», 1918, № 6.
[12] ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 1, թ. 77։

6. Ազգությունների գործերի ժողկոմատին կից ազգությունների խորհրդի վրա պարտականություն գնել եզրակացություն տալու սկզբունքային նշանակություն ունեցող այն բոլոր հարցերի և միջոցառումների մասին, որոնք առաջ են գալիս ինչպես առանձին հանրապետությունների և մարզերի, այնպես էլ ցրված ժողովուրդների համար...

7. Ազգությունների գործերի ժողկոմատի հրատարակչական գործունեությունն ուժեղացնելու և «Жизнь национальностей» թերթի տպաքանակն ավելացնելու նպատակով ազգությունների գործերի ժողկոմատին պարտավորեցնել համաձայնության գալ պոլիգրաֆբաժնի և պետհրատի հետ՝ համապատասխան տպագրական հնարավորություններ և անհրաժեշտ քանակով թուղթ տրամադրելու մի քանի ազգերի լեզուներով հրատարակությունների համար։

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ ԼԵՆԻՆ

Ժողկոմխորհրդի քարտուղար՝ ՖՈՏԻԵՎԱ

Մոսկվա, Կրեմլ, 30 հոկտեմբերի, 1920 թ.[13]։

* * *

Ազգությունների գործերի ժողկոմատը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հետ միասին կատարելով ժողկոմսովետի հանձնարարությունը, մեծ աշխատանք է ձեռնարկել հետազոտելու Ռուսաստանի բնակչության ցեղային և ազգային կազմը, նպատակ ունենալով այդ նյութերն օգտագործել սովետական պետության ազգային քաղաքականության հիմունքները մշակելու և կիրառելու ընթացքում։ Կազմվել է հատուկ հանձնաժողով, որի մեջ մտել են Ռուսաստանի գիտություններն ակադեմիայի և Մոսկվայի ու Պետրոգրադի համալսարանների այն գիտնականները, որոնք լավատեղյակ էին ժողովուրդների ազգային կազմին ու կյանքին[14]։

Բնակչության ցեղային և ազգային կազմը ուսումնասիրող հանձնաժողովի կազմում աշխատել են հետևյալ գիտնականները. Ն. Գ. Ադոնց՝ Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր, Դ. Ն. Անուչին՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, Վ. Վ. Բարտոլդ՝ ակադեմիկոս, Վ. Ի. Վերնադսկի՝ ակադեմիկոս, Դ. Ա. Զոլոտարյով (հանձնաժողովի գիտական քարտուղար), Ե. Ֆ. Կարսկի՝ ակադեմիկոս, Ն. Յա. Մառ՝ ակադեմիկոս, Ս. Ֆ. Օլդենբուրգ՝ ակադեմիկոս (հանձնաժողովի նախագահ), Ի. Ա. Օրբելի՝ Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր, Վ. Ն. Պերետց՝ ակադեմիկոս, Ա. Ա. Շախմատով՝ ակադեմիկոս, Լ. Յա. Շտեյնբերգ՝ պրոֆեսոր, և ուրիշներ։ Հանձնաժողովն իր հերթին կազմված էր չորս բաժիններից՝ կովկասյան, միջինասիական, սիբիրյան ու եվրոպական։ Բաժիններն իրենց հերթին ստեղծել էին սեկցիաներ, որոնց հանձնարարված էր աշխատել առանձին մարզերում։

Հանձնաժողովի անդամները մեկնել են այն երկրամասերը, ուր հնարավոր է եղել, և ծանոթացել բնակչության կազմին, ինչպես նաև օգտագործել վիճակագրական բազմազան նյութեր։ Այն մարզերի մասին, որտեղ քաղաքացիական կռիվների պատճառով անհնար է եղել մարդիկ գործուղել, նյութեր

---

13 ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 12, թ. 150։

14 Նույն տեղում, դ. 16, թ. 62—63։

են քաղվել 1897 թ. մարդահամարի տվյալներից և նահանգների 1917 թ. տարեկան հաշվետվություններից, ինչպես նաև այլ աղբյուրներից։

Կանգ առնենք կովկասյան բաժնի ընդգրկած շրջանների և ժողովուրդների օրինակի վրա։

Կովկասյան բաժինն ունեցել է 9 սեկցիա։ Առաջին սեկցիան հետազոտել է հյուսիսային-պոնտական շրջանի ագիգեյ-աբխազական և զիրո-աբխազական ցեղերը, երկրորդ սեկցիան՝ ցամաքային-լեռնանցքային շրջանի օսական-չեչենական ցեղերը, երրորդը՝ Հյուսիսային Կասպիայի լեզգիներին և թուրքերին, չորրորդը՝ Հարավային Կասպիայի շրջանի թալիշ-թուրքական ցեղերը, հինգերորդը՝ ծովափնյա-ցամաքային շրջանի աղրբեջանական-քրդական ցեղերը, վեցերորդը՝ Կուր և Ռիոն գետերի ցամաքային շրջանի վրացական կամ քարթլի-իմերեթական ցեղերը, յոթերորդը՝ Եփրատ-Արաքս-Ճորոխ գետերի և Վան-Սևան-Թոփարավան լճերի շրջանի հայերի, քրդերի և թուրքերի կազմը, ութերորդը՝ հարավային-պոնտական լազերի և մենգրելների կազմը, իններորդը՝ Կովկաս վերաբնակեցված կոլոնիստներին։ Կովկասյան բաժնի հաշվետվությունից նկատելի է պրոֆ. Ադոնցի մեծ դերը երկրամասի բազմացեղ ժողովուրդների կազմը հետազոտելու գործում։ Ն. Ֆ. Ադոնցը իր կատարած աշխատանքների մասին զեկուցագիր ներկայացրեց, որը տալիս էր Կովկասի ժողովուրդների ցեղային կազմի այն ժամանակվա պատկերը։ Նա կազմեց ամբողջ Կովկասի այն բնակավայրերի քարտեզը, որտեղ ապրում էին հայեր (մասնավորապես Երևանի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի նահանգներում և Կարսի մարզում)։

Հանձնաժողովի ընդհանուր հաշվետվության մեջ նշված է նաև, որ պրոֆ. Ադոնցը սկսել է ավելի մեծ գիտական աշխատանք՝ ձեռնարկել է Անդրկովկասի և Եփրատյան Հայաստանի (այսինքն Արևմտյան Հայաստանի նահանգների) բնակչության քարտեզը կազմելու գործը[15]։

Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում եվրոպական, սիբիրյան և միջինասիական բաժինների աշխատանքները։ Ազգությունների գործերի ժողկոմատի կոլեգիայի նիստերից մեկի արձանագրությանը կցված են երկրի բնակչության ցեղային կազմն ուսումնասիրող հանձնաժողովի բոլոր բաժինների և սեկցիաների ներկայացրած զեկուցումները, որոնցում ցույց են տրված բնակչության տեղաշարժերը և բնակավայրերում կատարված փոփոխությունները։

Կոլեգիայի մի այլ նիստի արձանագրությանը կցված դիագրամները ցույց են տալիս 1917—1920 թթ. Ռուսաստանի մի շարք մարզերի բնակչության ազգային կազմի կրած փոփոխությունները և ռուսների ու տեղական ցեղերի հարաբերությունները[16]։ Ժողկոմատի կոլեգիայի նիստերում քննվել են այդ նյութերը և վերլուծվել տեղի ունեցող իրադարձությունները։

Այսպիսով, արխիվային վավերագրերը ցույց են տալիս, թե Լենինի գլխավորած սովետական կառավարությունը, նրա կենտրոնական և տեղական օրգանները դեռևս հեղափոխության և քաղաքացիական կռիվների դժվարին տարիներին ինչպիսի հոգատարությամբ էին մոտենում ազգերի և ազգային հարաբերությունների հարցին, օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները՝

15 Նույն տեղում, թ. 67։
16 Նույն տեղում, գ. 8, թ. 37—40։

թափանցելու երկրի բազմազգ ժողովուրդների կյանքի առանձնահատկությունների մեջ։ Լենինը պահանջում էր մշտապես հաշվի առնել բնակչության ազգային կազմը, զարգացման աստիճանը, պատմական անցյալը, ազգային յուրահատկությունները։

1917 թ. նոյեմբերի 22-ին ռազմական նավատորմի համառուսաստանյան համագումարում արտասանած իր ճառում Լենինը ընդգծել է «ազգությունների առանձնապես խայտաբղետ կազմը Ռուսաստանում, որտեղ վելիկոռուսները կազմում են միայն մոտ 40 տոկոս»[17]։ Լենինը այնուհետև նշել է, որ ցարիզմը և Կերենսկու կառավարությունը բնակչության այլազգի մեծամասնությանը բռնությամբ պահում էին հպատակության տակ և արժանանում նրա ատելությանը։ Դնելով այդ ազգերի ազատ ինքնուրույն պետություններ ստեղծելու հարցը, Լենինը կտրականապես առարկում էր որոշ մարդկանց այն տարակուսանքներին, թե Ռուսաստանը բաժան-բաժան կլինի, կտրոհվի առանձին, փոքր հանրապետությունների։ Նա գտնում էր, որ «մենք դրանից վախենալու բան չունենք։ Որքան էլ որ ինքնուրույն հանրապետություններ լինեն, մենք դրանից չենք սարսափի»[18]։ Այնուհետև Լենինը հաստատակամ ու վճռական հայտարարեց «Մենք պետք է ոչնչացնենք այն հին, արյունալի ու կեղտոտ անցյալը, երբ կապիտալիստ-կեղեքիչների Ռուսաստանը մյուս ազգերի նկատմամբ դահճի դեր էր կատարում։ Այդ անցյալը մենք կոչնչացնենք, մենք այդ անցյալից քարը քարի վրա չենք թողնի»[19]։

* * *

Ազգերի ազատագրման և ինքնուրույն հանրապետություններ կազմելու մասին Լենինի հռչակած սկզբունքներն առավել ցայտուն կերպով դրսևորվեցին Ուկրաինայի և Հայաստանի նկատմամբ։

Հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո Լենինը կուսակցության Կենտկոմի և Ժողկոմսովետի առջև ամբողջ սրությամբ դրեց ուկրաինական ժողովրդի ինքնորոշումը իրագործելու, ուկրաինական անկախ ժողովրդական պետություն կազմակերպելու հարցը։ 1917 թ. նոյեմբերի 22-ին արտասանած իր ճառում Լենինը ընդգծեց ուկրաինական ժողովրդի լիակատար ազատագրման, ուկրաինական հանրապետություն ստեղծելու անհրաժեշտությունը։

Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների սովետը «կրկին անգամ հաստատեց ինքնորոշման իրավունքը բոլոր ազգերի համար», որը հռչակվել էր սովետների համառուսաստանյան II համագումարում։ Այդ որոշման հիման վրա էլ կառավարությունը ավելի որոշակի դրեց ուկրաինական սովետական հանրապետություն ստեղծելու, այն ճանաչելու, նրա հետ դաշնակցային հարաբերություններ հաստատելու իր պատրաստակամությունը. «Մենք՝ ժողովրդական կոմիսարների սովետը, ճանաչում ենք Ուկրաինական ժողովրդական հանրապետությունը, ճանաչում ենք Ռուսաստանից լիակատար անջատման կամ Ռուսաստանի հանրապետության հետ պայմանագիր կնքելու նրա իրավունքը ֆեդերատիվ և այլ կարգի փոխհարաբերությունների մեջ լինելու

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 420։
18 Նույն տեղում, էջ 421։
19 «Известия ВЦИК», 25 ноября, 1917.

վերաբերյալ»[20]։ Այսպիսով, Սովետական Ռուսաստանի կառավարությունը մի հարվածով ջնջեց այն ամբողջ վելիկոռուսական, տիրակալական քաղաքականությունը, որ դարերի ընթացքում կիրառվել էր ուկրաինական ժողովրդի նկատմամբ։ Ժողկոմսովետի հռչակած սկզբունքները նախանշեցին ուկրաինական ազգային պետականություն ստեղծելու և զարգացնելու պատմական խնդիրը։ «Այն ամենը, ինչ վերաբերում է ուկրաինական ժողովրդի ազգային իրավունքներին և ազգային անկախությանը, ճանաչվում է մեր, ժողովրդական կոմիսարների սովետի կողմից, իսկույն ևեթ, առանց սահմանափակումների և անպայման»[21]։ Այդ հայտարարությունը քննարկման դրվեց Ուկրաինայի հասարակական-քաղաքական գործիչների շրջանում և ժողովրդի լայն խավերի մեջ, որոնք հավանություն էին տալիս ուկրաինական սովետական հանրապետություն ստեղծելու ծրագրին[22]։ Այնուհետև ՌՍՖՍՀ Ժողկոմսովետը Լենինի նախագահությամբ քննում է ուկրաինական ժողովրդի պահանջը և կրկին անդրադառնում իր նախկին հայտարարությունն ուկրաինական սովետական պետության ստեղծման մասին[23]։

Ռուսաստանի Ժողկոմսովետը, համառուսաստանյան Կենտգործկոմը, բոլշևիկների կուսակցության կենտկոմը, նրանց հետ համագործակցող ձախ էսերների կուսակցության կենտկոմը, Պետրոգրադի բանվորների և զինվորների դեպուտատների սովետը 1917 թ. դեկտեմբերի 8-ին դիմում-կոչ ուղղեցին Ուկրաինայի բանվորներին, զինվորներին և գյուղացիներին՝ ամբողջ ուկրաինական ժողովրդին բացատրելով ստեղծված իրադրությունը և ուկրաինական հանրապետություն ստեղծելու համար ծավալվող պայքարի խնդիրները[24]։ Կոչի մեջ բացահայտվեցին ուկրաինական անկախ սովետական հանրապետություն կազմակերպելու գործի հակառակորդների մեքենայությունները, Կերենսկու տապալված մինիստրների և ուկրաինական բուրժուական Ռադայի պարագլուխների գործարքը, Պետլյուրայի և Կալեդինի հակահեղափոխական բանդաների հակասովետական գործողությունները։ «Ուկրաինացի եղբայրներ,— ասված է կոչի մեջ,—ձեզ հավաստիացնում են, իբր թե մենք դեմ ենք Ուկրաինայի ինքնորոշմանը։ Դա կեղծիք է։ Մենք ոչ մի րոպե անգամ չենք մտածում Ուկրաինայի իրավունքները բռնանալու մասին։ Հեղափոխական պրոլետարիատն է միայն շահագրգռված, որպեսզի ազգերի համար ապահովվի ինքնորոշվելու իրավունք՝ ընդհուպ մինչև անջատումը...»[25]։ Ժողկոմսովետը և Կենտկոմը կոչ արեցին Ուկրաինայի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին վերակազմել Ռադան, ամբողջ երկրում հաստատել սովետական իշխանություն, ստեղծել ուկրաինական սովետական հանրապետություն։

Ուկրաինայի բոլշևիկները, ելնելով ազգային հարցի լենինյան դիրքորոշումից, պայքար էին ծավալում ուկրաինական սովետների համագումար հրավիրելու և ուկրաինական սովետական հանրապետություն ստեղծելու համար։ 1917 թ. դեկտեմբերի 11—12 (24—25)-ին Խարկով քաղաքում տեղի ունեցավ

---

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 439։

21 Նույն տեղում։

22 Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 19, оп. 1, д. 30, թ. 3։

23 Տե՛ս «Известия» ВЦИК, 21 декабря, 1917.

24 Տե՛ս «Большевистские организации Украины» (ноябрь 1917, апрель 1918, сб. док.), Киев, 1962, էջ 7—9։

25 Նույն տեղում։

սովետների համաուկրաինական առաջին համագումարը, որը արտահայտեց իր միահամուռ համերաշխությունը Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի հռչակած ազգային քաղաքականության հետ։ Համագումարը որոշում ընդունեց ամբողջ Ուկրաինայի տերիտորիայում սովետական իշխանություն հայտարարելու մասին. «Ուկրաինան հայտարարվում է բանվորների, գյուղացիների և զինվորների դեպուտատների սովետների հանրապետություն»[26]։ Համագումարը այնուհետև առանձին որոշում ընդունեց «Ուկրաինայի ինքնորոշման մասին»։ Ուկրաինական Սովետական Հանրապետությունը Ռուսաստանի Սովետական Հանրապետության հետ կապվեց ֆեդերատիվ հիմունքներով։ Ընտրվեց Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Կենտգործկոմ, որը դեկտեմբերի 17-ին (30-ին) ձևավորեց Ուկրաինական ՍՍՀ-ի առաջին կառավարությունը։ Ուկրաինական առաջին սովետական կառավարության կազմում ընտրվեցին Ֆ. Ա. Սերգեևը (Արտյոմ), Ն. Ա. Սկրիպնիկը, Ե. Բ. Բոշը, Վ. Պ. Զատոնսկին և ուրիշներ։ Կառավարության նախագահ հաստատվեց Ն. Ա. Սկրիպնիկը։ Ուկրաինայի սովետների համագումարը Կիևում հաստատված բուրժուական Ռադան հայտարարեց օրենքից դուրս։

Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների սովետը ողջույնի հեռագիր ուղարկեց Ուկրաինայի սովետական կառավարությանը, խոստացավ ամեն տեսակի օգնություն ցույց տալ ուկրաինական եղբայրական հանրապետության կառավարությանը[27]։ Սովետների համառուսաստանյան III համագումարում ունեցած ելույթի մեջ Լենինը ողջունեց ուկրաինական ժողովրդական հանրապետության ստեղծումը և հայտարարեց, որ ոչ մի տարակուսանք չի կարող լինել ուկրաինական ժողովրդական հանրապետության հաղթանակի նկատմամբ բուրժուական Ռադայի դեմ մղվող պայքարում[28]։ Համագումարը լիովին հավանություն տվեց ուկրաինական անկախ սովետական հանրապետություն ստեղծելու պատմական ակտին։

Այսպիսով, Ուկրաինայի ինքնորոշման, ուկրաինական ազգային պետականության ստեղծման, ուկրաինական ժողովրդի բազմամիլիոն մասսաների ազգային և սոցիալական ազատագրման գործի համար իսկական մարտնչողը և այն հաղթանակի հասցնողը հանդիսացան Լենինը և բոլշևիկյան կուսակցությունը։ Լենինը 1918 թ. ասում էր. «Բոլշևիզմն Ուկրաինայում դարձավ յուրահատուկ ազգային շարժում»[29]։ Այդ յուրահատուկ ազգային շարժումը միասնաբար լուծում էր ազգային և սոցիալական հարցերը։

Ազգերի ազատագրման և նրանց պետականության ստեղծման կոնկրետ օրինակներից մեկն էլ Լենինի մշակած ծրագիրն ու Ժողկոմսովետի հռչակած քաղաքականությունն էր Հայաստանի նկատմամբ։

Հայտնի է, որ Հայաստանը վաղուց մասնատված էր երկու մասի, որոնցից Արևմտյան Հայաստանը գտնվում էր թուրքական, իսկ Արևելյան Հայաստանը՝ ռուսական պետության կազմում։

Համաշխարհային պատերազմի շրջանում և մասնավորապես 1915—1916 թվականներին թուրքական իշխանությունները իրագործեցին հայ բնակչության

---

26 «Великая Октябрьская Социалистическая Революция на Украине», т. 2, Киев, 1957, էջ 574։

27 Նույն տեղում, էջ 594։

28 Տե՛ս Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 26, էջ 418։

29 Տե՛ս «Вопросы истории КПСС», 1962, № 2.

մասսայական տեղահանումը և ջարդը։ Կոտորվեց ավելի քան մեկ և կես միլիոն հայ բնակչություն, մոտ մեկ միլիոն մարդ էլ բռնագաղթի ենթարկվեց, արտաքսվեց Հայաստանից, ուղարկվեց Թուրքիայի ներքին նահանգները կամ ցրվեց օտար երկրներում։

Պատերազմի ժամանակ ռուսական բանակը գրավեց Արևմտյան Հայաստանի մի մասը՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգները, ինչպես նաև Տրապիզոնի մարզը։ Կերենսկու ժամանակավոր կառավարությունն այդ նահանգները հայտարարեց «Թուրքահայաստանի նահանգապետություն» և այդ երկրամասի կառավարման համար նշանակեց գլխավոր կոմիսար։ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ այդ նահանգները գտնվում էին ռուսական բանակի իշխանության տակ։

1917 թ. հունիսի 9-ին սովետների համառուսաստանյան I համագումարում Լենինը անդրադարձավ Հայաստանի հարցին, քննադատեց Հայաստանում տիրապետող դիրք գրավելու համար պայքարող պետությունների նվաճողական քաղաքականությունը, մասնավորապես նվաճող պետությունների կողմից Հայաստանի անեքսիան։ Լենինը այն միտքը հայտնեց, որ եթե Հայաստանը դարձվեր անկախ հայկական հանրապետություն, այդ լավ կլիներ[30]։ Այսպիսով, դեռևս 1917 թ. հունիսին Լենինը առաջ էր քաշում Հայաստանը անկախ հայկական հանրապետություն դարձնելու խնդիրը։

Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին, 1917 թ. հոկտեմբերի սկզբներին, Լենինը կրկին անդրադառնում է այդ հարցին և հայտարարում. «...Մենք պարտավորվում ենք իսկույն ևեթ բավարարել ուկրաինացիների և ֆինլանդացիների պահանջները, ապահովել նրանց, ինչպես և բոլոր այլացեղերին Ռուսաստանում, լիակատար ազատություն, մինչև անջատման ազատությունը, կիրառել նույն այդ բանն ամբողջ Հայաստանի նկատմամբ»[31]։

Լենինի այս հարցադրումը սկզբունքային նշանակություն ունի. նա խոսում է ամբողջ Հայաստանի և ոչ թե նրա արևմտյան կամ արևելյան հատվածի ինքնորոշման և ինքնուրույն հայկական պետականություն ստեղծելու մասին։

Հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո Լենինի գլխավորած Ժողովրդական կոմիսարների սովետը, հաշտության և հողի մասին հանրահայտ դեկրետների հետ միասին, ազդարարեց ճնշված ազգերի ազատագրման և անկախության իրավունքը՝ որպես անխախտ սկզբունք, որպես ազգային քաղաքականության գլխավոր գիծ։ Այդ գլխավոր գիծը կոնկրետացվեց նաև Հայաստանի հարցում։

Ժողովրդական կոմիսարների սովետը ստեղծեց հատուկ հանձնաժողով, որին հանձնարարվեց նախապատրաստել Հայաստանի ինքնորոշման հարցի մասին համապատասխան որոշման նախագիծը։ Սովետական Ռուսաստանի կառավարության կենտրոնական ապարատում, ազգությունների գործերի կոմիսարիատին կից ստեղծվեց հայկական գործերի կոմիսարիատ, որը գլխավորեցին Սուրեն Մարտիրոսյանը (որը հայտնի է նաև Վառլամ Ավանեսով հեղափոխական ծածկանունով) և նշանավոր բանաստեղծ Վահան Տերյանը։ Կազմվեց հատուկ զեկուցագիր Հայաստանի վիճակի մասին, որի մեջ համառոտակի շարադրված էին արևմտահայության պատմության հիմնական դըր-

30 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 37։
31 Նույն տեղում, հատ. 26, էջ 58։

վագները և Հայաստանի արևմտյան նահանգների վիճակը։ Այդ փաստաթուղթը ներկայացվեց Լենինին և սովետական կառավարության մյուս ղեկավարներին։

Հայաստանի անկախության հարցի իրավական ձևակերպման ակտի նախապատրաստման գործում ներգրավվեցին, Ավանեսովից և Տերյանից բացի, նաև Ռոստոմ Զորյանը և Պռոշ Պռոշյանը։ Լենինը զրույցներ է ունենում նրանց հետ այդ խնդրի առավել ռեալ և նպաստավոր լուծման վերաբերյալ։

Ազգային հարցի լենինյան դիրքորոշումից բխում էր ամբողջ Հայաստանի միասնական ինքնորոշում, միասնական հայկական պետության կազմավորման հիմունքների հաստատում։ Այդ հարցն առաջին անգամ դրվում է Ժողկոմսովետի նիստում 1917 թ. դեկտեմբերի 20-ին, սակայն վերջնական որոշում չի կայացվում։ Դեկտեմբերի 23-ին Ժողկոմսովետի նիստը նորից է քննում Հայաստանի ինքնորոշման հարցը։

Ժողկոմսովետի քննարկման ներկայացված որոշման նախագիծը կոչվում էր «Դեկրետ Հայաստանի մասին»։ 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ժողկոմսովետը Լենինի նախագահությամբ երրորդ անգամ է քննում Հայաստանի ինքնորոշման հարցը և ընդունում է «Թուրքահայաստանի մասին» դեկրետը։ Այդ դեկրետով Ժողովրդական կոմիսարների սովետը հռչակեց Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն։ Այնուհետև Ժողկոմսովետը որոշումներ ընդունեց տարբեր երկրներում ցրված հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձի մասին Թուրքահայաստանի սահմանները և պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի Թուրքահայաստան անարգել վերադարձի մասին, նշելով, որ այդ հարցերի վրա «Ժողովրդական կոմիսարների սովետը կպնդի թուրքական իշխանությունների հետ ունենալիք խաղաղ բանակցությունների ժամանակ»։ Ժողկոմսովետը նպատակահարմար էր համարում, որ օտար զորքերը դուրս բերվեն Հայաստանից և ժողովրդին հնարավորություն տրվի առանց կողմնակի միջամտության տնօրինել իր բախտը, որոշել իր պետական կառավարման ձևը և այլն։ Ռուսական զորքերն այդ ժամանակ գտնվում էին Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներում, իսկ թուրքական զորքերը՝ Տիգրանակերտի, Սեբաստիայի և Խարբերդի նահանգներում։

Հայաստանի ինքնորոշման տրամաբանությունը պահանջում էր, որ այդ բոլոր նահանգներն ազատվեին օտար զորքերից, բռնագաղթի ենթարկված հայ բնակչության կենդանի մնացած զանգվածները վերադառնան իրենց հայրենի քաղաքներն ու գյուղերը և վերահաստատվեն իրենց նախնիների բնօրրանում։ Զորքերը Թուրքահայաստանից դուրս բերելու մասին լենինյան դեկրետը մաղաչափ անգամ չէր ենթադրում, թե ռուսական հեղափոխական զորքը Հայաստանից հեռանալով անարգել իրավունք է վերապահում թուրքական բռնադատիչներին իրենց բանդաները մտցնել ինքնորոշման իրավունք ստացած հայկական նահանգները և արգելակել Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած մեծ սկզբունքների իրագործումը։

Լենինյան դեկրետի չորրորդ կետը նախատեսում էր Արևմտյան Հայաստանում կազմակերպել ժողովրդական կառավարություն՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի դեպուտատների սովետի ձևով։ Դա հայկական ժողովրդական հանրապետության կամ սովետական սուվերեն պետու-

Ության կառուցման սկզբունքի հռչակում էր։ Ժողովրդական կոմիսարների սովետի անունից ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատը նույն օրը հատուկ հայտարարություն հրապարակեց Հայաստանի մասին։

1918 թ. հունվարին սովետների համառուսաստանյան III համագումարը հավանություն տվեց Հայաստանի ինքնորոշման մասին այդ դեկրետին և իշխանության բարձրագույն օրգանի իրավասությամբ հաստատեց հայ ժողովրդին տրված մեծ իրավունքը։

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, այսպիսով, հռչակեց և իրավականորեն ձևակերպեց հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրման այն մեծ սկզբունքները, որոնք արտահայտում էին նրա դարավոր բաղձանքները։

1918 թ. սկզբներից կայզերական Գերմանիան օկուպացրեց Ուկրաինայի մեծ մասը, սակայն Ուկրաինական Սովետական Հանրապետության ղեկավար օրգանները փոխադրվեցին օկուպացիայից ազատ մնացած շրջանները և շարունակեցին իրենց գործունեությունը մինչև օկուպանտների վտարումն Ուկրաինայից, որից հետո վերադարձան Ուկրաինա և ձեռնամուխ եղան ուկրաինական սովետական պետության կառուցման գործին։

Այլ ընթացք ունեցավ Հայաստանի բախտը։ 1918 թ. սկզբներին թուրքական զորքերը ոչ միայն չհեռացան իրենց գրաված հայկական շրջաններից, այլև ներխուժեցին այն նահանգները, որտեղից հեռացել էին ռուսական զորքերը։ Դրանից հետո թուրքական բանակը հարձակվեց նաև Հայաստանի արևելյան նահանգների վրա և օկուպացիոն ռեժիմ հաստատեց գրաված շրջաններում։ Այսպիսով, թուրքական օկուպացիան արգելակեց հայ բնակչությանը վերադառնալ Հայաստանի նահանգներն ու գավառները և իրագործել Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի դեկրետով իրեն տրված իրավունքները, հնարավորություն չտվեց դեռևս 1918 թ. իրագործել Ժողկոմսովետի հռչակած սկզբունքները և լենինյան ծրագիրը հայկական ժողովրդական հանրապետություն ստեղծելու մասին։

Սովետական կարգերը Հայաստանում հաստատվեցին միայն երկու տարի հետո՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին։

ОСУЩЕСТВЛЕНИЕ ЛЕНИНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ В 1917—1918 ГОДАХ

Доктор историч. наук А. Н. МНАЦАКАНЯН

(Резюме)

В. И. Ленин придавал большое значение разработке основ национальной политики Советского государства и правильному осуществлению этой политики.

В дни Октябрьской революции Ленин подчеркивал, что национальный и аграрный — это коренные вопросы в настоящее время.

Второй съезд Советов (25 октября 1917 г.), образовав Советское правительство, провозгласил главные принципы советской национальной политики, изложил основные тезисы ленинских декретов и других

основополагающих документов, касающихся национальной политики; принципы самоопределения наций и образования национальных советских республик, их суверенные и правовые положения. В составе Советского правительства были созданы специальные органы для непосредственного осуществления национальной политики. Этими органами были: народный комиссариат по делам национальностей РСФСР и комиссариат по делам отдельных национальностей.

В первые же послеоктябрьские месяцы Правительство РСФСР совместно с Российской академией наук создало комиссии из крупнейших специалистов-ученых, которым было поручено собирать статистические материалы о национальном и племенном составе народов бывшей Российской империи, на основе анализа которых можно было решать вопросы национально-государственного строительства каждой нации.

В том же году по инициативе Ленина была образована комиссия для разработки документов о провозглашении независимости Армении и образования армянского советского государства. Совнарком обсудил вопрос об Армении на заседаниях 20 и 23 декабря 1917 г., а 29 декабря принял декрет о Западной Армении. 10 января 1918 г. III Всероссийский съезд Советов утвердил написанный В. И. Лениным проект Декларации прав трудящихся и эксплуатируемого народа, в котором среди других вопросов декларирован также принцип самоопределения Армении и образования самостоятельного армянского советского государства. Однако, как известно, в силу ряда обстоятельств Советская власть в Армении была установлена лишь в ноябре 1920 г.